

ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՈՒՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՈՒՅԻՆ*

Բ. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՈՒՆԵՐ

Հայերն համարարբառների պատմությունը թևակոյսում է իր երկրորդ հիմնական հանգրվանը, որն ընթանում է նոր ժամանակներում գրականության ու գիտության զարգացման հետ կապված նոր պահանջների գծով:

Նախորդ և նոր հանգրվանների բաժանումը, սակայն, անմիջականորեն և անպայմանորեն ժամանակագրական չի եղել: Մինչ առաջին հանգրվանը, ինչպես տեսանք, շարունակում է պահպանել իր գոյությունը դեռ մինչև մեր օրերում, երկրորդ մենց նրա ազդեցությամբ և նրա օրինակով սկսում էր զարգանալ դեռևս սրանից երկու հարյուրամյակ առաջ: Որպես առաջին նմուշ՝ Ժ. Դարից մեզ հայտնի է Գրիգոր Նարեկացու երկների անտիպ համարբարբառը:

Հայ իրականության մեջ հանդես եկող այդ երևույթը ընդհանուր կապերով կապված էր արևմտյան աշխարհում սկսված այն փորձերի հետ, որոնք բնագրաբնական համարբառապային մեթոդը կիրառում էին աշխարհիկ և զուտ գիտական հետազոտությունների համար՝ լեզվաբնական և աղբյուրագիտական նպատակներով:

Առաջման դմվարանում ենք ճշգրտորեն ասել, թե առաջին անգամ ե՞ր և ո՞ր երկրում է սկսել կիրառվել համարբառապային մեթոդը գրականության և գիտության մեջ նշանավոր հանդիսացած հետինակների երկերի բնագրային բարության ասպարեզում: Բայց մեզ հայտնի է, որ Անգլիայում, սկսած Ժ. Դարի երկրորդ կեսից և մինչև մեր օրերը, լոյս են տեսել հոչակալիոր թատրերգակ բանաստեղծ Ուիլիամ Շեքսպիրի (1564—1616 թթ.) երկերը մասնակիորեն և կամ ամբողջությամբ ընդգրկող համարբառներ: Նման աշխատանքների առաջին միջատակությունը կապվում է շեքսպիրագետ Ռ. Ուոուների (1713—1775 թթ.) անվան հետ: 1768 թվականին Ուոուները շեքսպիրյան համբավակոր դերասան Դավիթ Գարրիջին ուղած մի նամակում խոսում էր այն մասին, թե կազմում է Շեքսպիրի թատերախաղերի բառարան, որի փորձանմուշը կցել էր նամակին: այդ բառարանը, որի վրա նա աշխատել է մինչև իր մահը և որը մնացել է անտիպ, այժմ գտնվում է Բրիտանական Թանգարանում⁹: Դրանից հետո տպագրությամբ լոյս են տեսել Շեքսպիրի երկերին նվիրված համարբառապային մի շարք գործեր, որոնցից նշենք հետևյալները: Նախ երատարակվել է Բրիտանական Թանգարանի պաշտոնյա՝ հայտնի գրադարանագետ Ս. Էլյոնուի կազմած համարբառը՝

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. №№ ԺԱ-ԺԲ-Հց և 1972 թ. № Ա-Հց:

¹⁰ Համ. F. E. Halliday, „A Shakespeare Companion 1554—1964”, Harmondsworth, Penguin Books Ltd., 1964, p. 521.

1790/91 թվականներին⁵⁰: Այսուհետև լոյս է տեսել բերականագետ Ֆ. Տուիսի կազմած համարաքաղը՝ 1805 թվականին⁵¹: Բնիտանական Թանգարանի ձեռագրերի պահորդ Ռ. Նեյզը 1822 թվականին հրատարակել է Շեքսպիրի և նրա ժամանակակիցների լեզվի բառարանը⁵²: Շեքսպիրագետ տիկ. Ս. Կլարկը 1844/45 թվականներին հրատարակել է իր համարաքաղը⁵³: Բանասեր Ա. Դայը 1864 թվականին հրատարակել է Շեքսպիրի խըրթին բառերի և դարձվածքների բառարանը⁵⁴: 1872 թվականին իր համարաքաղը է հրատարակել շեքսպիրագետ տիկ. Հ. Կ. Ֆլոնտսը⁵⁵, ինչ Ա. Շիդլոր 1874 թվականին լոյս է ընծայել իր շեքսպիրյան համարաքաղ-բառարանը⁵⁶: Ավելի նոր ժամանակներում շեքսպիրյան համարաքանութեր են հրատարակել Ուիլ. Հ. Ադամզը՝ 1886 թվականին⁵⁷, 2. Մաքելը՝ 1887-ին⁵⁸, Հ. Բարտլեթը՝ 1894-ին⁵⁹, Ջ. Ֆորաները՝ 1908-ին⁶⁰, Ռ. Զ. Կանիֆը՝ 1910-ին⁶¹, Հ. Բարտլեթը՝ 1912-ին⁶²:

⁵⁰ S. Ayscough, "An Index to the Remarkable Passages and Words, Made Use of by Shakespeare, Calculated to Point out the Different Meanings to which the Word are Applied.", London, 1790 (առաջին մաս, I-1081 էջ) և Dublin, 1791 (երկրորդ մաս, 1083-1754 էջ):

Տես նաև նույնի վերաբերաբանությունը՝ "...2-d ed., revised and enlarged", London 1827.

⁵¹ Fr. Twiss, "A Complete Verbal Index to the Plays of Shakespeare, Comprehending Every Substantive, Adjective, Verb, Participle and Adverb Used by Shakespeare with Reference to Every Individual Passage in which Each Word Occurs.", vol. I-II, London, 1805.

⁵² R. Nares, "A Glossary or Collection of Words, Phrases, Names and Allusions to Customs, Proverbs, etc., which have been Thought to Require Illustrations, in the Works of English Authors, particularly Shakespeare and his Contemporaries", London, 1822.

Տես նաև նույնի այլ հրատարակությունը՝ "with considerable additions both of words and examples", by J. O. Hollywell and H. Wright, vol. I-II, London, 1859.

⁵³ M. C. Clarke, "The Complete Concordance to Shakespeare. Being a Verbal Index to all the Passages in the Dramatic Works of the Poet", London, 1844-1845.

⁵⁴ Համար. F. E. Halliday, p. 114. Մեկ նայտին է նրա նետայիլ վերաբերաբանությունը. A. Dyce, "A Glossary to the Works of William Shakespeare", London, 1880.

⁵⁵ H. K. Furness, "A Concordance to the Poems of Shakespeare", Philadelphia, 1872.

⁵⁶ Համար. F. E. Halliday, p. 114. Մեկ նայտին են այս երկի 3-րդ և 4-րդ հրատարակությունները. A. Schmidt, "Shakespeare-Lexicon. A Complete Dictionary of all the English Words, Phrases and Constructions in the Works of the Poet", 3d ed., vol. I-II, Berlin, 1902. Նույնը՝ 4th ed., vol. I-II, Berlin und Leipzig, 1923.

⁵⁷ W. H. Davenport Adams, "A Concordance to the Plays of Shakespeare", London, 1886.

⁵⁸ Ch. Mackay, "A Glossary of Obscure Words and Phrases in the Writings of Shakespeare and his Contemporaries Traced Etymologically to the Ancient Language of the British People as Spoken before the Irruption of the Danes and Saxons", London, 1887.

⁵⁹ J. Bartlett, "A New and Complete Concordance or Verbal Index to Words, Phrases and Passages in the Dramatic Works of Shakespeare; with a Supplementary Concordance to the Poems", New York, 1894. Ուսեցել է բազմաթիվ հրատարակություններ. Վերցինը՝ 1966 թ.:

⁶⁰ J. Forster, "A Shakespeare Word-Book. Being a Glossary of Archaic Forms and Varied Usages of Words Employed by Shakespeare", London-New York, 1908.

⁶¹ R. J. Cunliff, "A New Shakespeare Dictionary", London, 1910.

**ՀԱՄԱԲԱՐԲԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՄԱՏԵԱՆԻ**

**ԳԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՅԱԿԱՐԱՆԱՑ
ԱՐԴԻ ԱԹԽԱՐՀԱԲԱՐՈՎ**

Աշխատավորեղ

ՎԵՐ. ՎԱԶԱՆ Գ. ՍԱՀԱԿԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՑ

ՊԵՐՐԱԿԱ

1963

Վ. Գ. Սահակյանի աշխարհաբար համարարրատի անվանաքննը

2. Տ. ՕՇիոնզը՝ 1911-ին²², Բ. Ստիվենսոնը՝ 1937-ին²³: Եվ վերջապես 1968—70 թվականների հրատարակությամբ մեզ հայտնի է Մ. Սպիլարի կազմած վեցհատորյա լիակատար համարարտառը²⁴:

Այս համարարտառները մեծ մասամբ բատա-բնագրային բնույթի են, այսինքն բառարաններ, որ տվյալ բառի տակ Ծերապիրի գործերից բերվում են հախաղատությունների այն մասերը, որոնց մեջ օգտագործված է այդ բառը. որիշներ նույնակեա այդ բնույթի լինելով հանդերձ, երբեմն, ըստ համամարենքի, բառերի դիմաց նշանակում են միայն աղյուրը՝ Քղեղով ոսղալի Ծերապիրի երկերին:

Անգլիայում այսպիսի համարարտառներ կան կազմված նաև որիշ բառաստեղծների և բատերագիրների երկերի համար, հնչակ, Զ. Չուների (1340—1406 թթ.)²⁵, Թ. Կինի (1558—1594 թթ.)²⁶, Քր. Մարլոնի (1564—1598 թթ.)²⁷, Զ. Դրայդենի (1631—1700 թթ.)²⁸, Թ. Գրեյի (1718—1771 թթ.)²⁹, Ուիլ. Բլեյքի (1757—1827 թթ.)³⁰ և որիշների: Եվրոպական մյուս առաջապոր երկրներում ևս գոյություն ունեն համարարտառներ: Մեր նպատակից դորս է ծավալվել այս ուղղությամբ. միայն նշենք ուստ մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի (1799—1837 թթ.) երկերի համարարտառը, որը կազմվեց մեր օրերում: Պուշկինան համարարտառ կազմելու ուղղությամբ Խուսաստանում աշխատանքներ էին կատարվում դեռևս 1933 թվականից սկսած, նաև արոֆ. Գ. Օ. Վինոգրովի դեկապարությամբ և ավելի ուշ՝ ակադ. Վ. Վ. Վինոգրարովի: Հավաքական հեղինակությամբ կատարվող այդ աշխատանքների արդյունքը եղավ բառահատոր «Պուշկինի լեզվի բառարան»-ը, որը 1956—1961 թվականների ընթացքում հրատարակության տրվեց ՍՍՀԱ Գիտությունների Ակադեմիայի Լեզվաբանության հնատիտուտի կողմից, նույն Վինոգրարովի խմբագրությամբ³¹:

Համարարրառային այսպիսի հրատարակությունները հնարավորություն են ստեղծում ուսումնասիրելու անգերեն, գերմաներեն, ռուսերեն և կամ որևէ լեզվի զարգացման օրինաչափությունները, ընթացքը և աստիճանը՝ ըստ այս կամ այն դարաշրջանի և այս կամ այն հեղինակի մոտ. նաև ուսումնասիրեն:

²² Ch. T. Onions, „A Shakespeare Glossary“, Oxford, 1911. Ուսեցել է, սրբազնություններով ու հավելումներով, ավելի քան 10 հրատարակություն. Վերջինը՝ 1958 թ.:

²³ B. Stevenson, „The Hom Book of Shakespeare Quotations. Being also a Concordance and a Glossary of the Unique Words and Phrases in the Plays and Poems“, New-York—London, 1937.

²⁴ M. Spevack, „A Complete and Systematic Concordance to the Works of Shakespeare“, vol. I-VI, Hildesheim, 1968-1970.

²⁵ I. S. P. Tatlock and Arthur G. Kennedy, „A Concordance to the Complete Works of Geoffrey Chaucer and to the Romaunt of the Rose“, Carnegie Institution of Washington, 1927.

²⁶ Ch. Crawford, „A Concordance to the Works of Thomas Kyd“, Louvain, 1906-1910.

²⁷ Ch. Crawford, „The Marlowe Concordance“, Louvain, 1911-1912.

²⁸ Guy Montgomery, „Concordance to the Poetical Works of John Dryden“, Los Angeles, Univ. of California Press, 1957.

²⁹ A. S. Cook, „A Concordance to the English Poems of Thomas Gray“, Boston—New York—Cambridge, 1908.

³⁰ D. V. Erdman, „A Concordance to the Writings of William Blake. Ed. by David V. Erdman, with the Assistance of John E. Thiesmeyer and Richard J. Wolfe“, vol. II, Ithaca (N. Y.), Connell Univ. Press, 1967.

³¹ «Ակադեմիա Նայ ՀՀՀ. Ինստիտուտ Յազկոնանի. Ըլօվար յազկա Պուշկին» (ժամանակակից աշխատանք) (առ. թիւ: Վ. Վ. Վինոգրադով), տ. I—IV, Մոսկվա, 1956—1961.

լու՝ որևէ հեղինակի մոտ համդես եկող լեզվական յուրահատուկ երևոյթները, ինչպես և նույն հեղինակի երկերի միջև եղած ներքին կապերը ոչ միայն լեզվի առումով, այլև լեզվի միջոցով ի հայտ եկող իմաստային ու գաղափարական առնչությունների և գիտական բովանդակության առումով: Այսպիսի համապարփակությամբ ուշագրավ է, օրինակ, հին աշխարհի հույն նշանավոր իմաստաեր Արիստոտելի երկերի համարարրառը, որ Բեոլինի Գիտությունների Ակադեմիայի հանձնարարությամբ կազմել և 1870 թվականին հրատարակել է բնագրաբան Հ. Բոնիտցը և որում ընդգրկված են, հունարեն լեզվի բառապաշտիքի հիման վրա, Արիստոտելի տեսական, բնագիտական, բնապատմական և այլ երկերը¹⁰²:

Ինչպես ասացինք՝ Նարեկացին հայ առաջին մատենագիրն է, որի գործերն արժանացել են համարարրատ ունենալու:

Նարեկացու համարարրատն անամուն աշխատություն է, որի ձեռագիրը մի ժամանակ գտնվում էր Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանում՝ 28 թվականամարի տակ, իսկ այժմ պահպան է նույն բաղարի Ս. Երրորդություն եկեղեցում: Այդ ձեռագրի նկարագրությունը ժամանակին տվել է Բարգեն վ. Կյուլեսերյանը¹⁰³: Նկարագրողի կարծիքը ձեռագիրը հավանաբար Հակոբ Նապանի (մեռ. 1764 թ.) ինքնագիրն է, ուստի և հեղինակությունը նրան է: Ապականում: Զեռագիրը բաղկացած է 234 բառապուն էջերից՝ յուրաքանչյուր 50—53 տողերով, բայց որում տողերի ընդհանուր քանակը ոչ պակաս, քան 12.000 է, բայց տողերի քանակը, օգտագործելի տարածության առումով, փաստորեն ոչ թե 12.000 է, այլ 4 անգամ ավելի (48.000), քանի որ էջերը բաժանված են 4 սյունակների:

Համարարրատի բնույթը բառա-բնագրային է: Ոչ ավելի քան 4 ամ. լայնություն ունեցող այունակների մեջ տեղափորկած են այքրենական կարգով իրար հաջորդող բառերը՝ իրենց վերին աստիճանի կրծատված կապակցություններով: Ցուրաքանչյուր բառի առջև դրված է արարական երկու թվանշան, որոնցից առաջինը ցուց է տալիս բնագրի գլխարաժանումները, իսկ երկրորդը՝ գլխի հատվածները: Նկարագրողը որպես նմուշ բերում է հետևյալ 8 տողերը, որոնք գաղափար են տալիս համարարրատի հօրինվածքի մասին.

| | | |
|------------------------|-----|-----|
| Աղախին Աստուծոյ և մայր | 80 | 18 |
| Աղախին և ի ձեռի | 82 | 43 |
| յ-Աղախմային ծառայ | 98 | 192 |
| Աղախմանուն հա | 96 | 245 |
| յ-Աղախմեայ ոք աղաչին | 82 | 22 |
| Աղախմեայ ոք ոյ | 90 | 46 |
| Աղախմոյն ի Սինայէ | 100 | 99 |
| Աղաղակ բարձրութեան | 95 | 20 |

Համարարրատը բովանդակում է, սյունակային տողերի հաշվով, 48.000 բառային վկայություն:

Համարարրատն ընդգրկում է ոչ թե միայն «Նարեկ»-ը, ինչպես կարծում է Ակարագրողը, այլ նաև Նարեկացու մյուս գործերը: Դրա ապացուցն այն է, որ տրված նմուշների մեջ կան նաև այնպիսիներ, որոնք Նարեկացու 96-րդ,

¹⁰² Herm. Bonitz, „Index Aristotelicus“, Berlin, 1870. Վերամրատարակվել է 1955 թ.:

¹⁰³ Բարգեն աթոռակից կաթողիկոս (Կյուլեսերյան), «Ծուցակ ձևողագրաց Ղալաքիոյ Ազգային Մատենադարանի Հայոց», էջ 114:

98-րդ և 100-րդ գլուխմանից են, մինչդեռ «Նարեկ» գիրքն ունի միայն 95 գլուխ: Համարարրատի հեղինակը «Նարեկ»-ի 95 գլուխմանից հետո՝ ներթական գլուխմանը է համարել նաև Նարեկացու մյուս երկերը, որպիսի ձևով նրանց արդեն պատահում ենք մի շաբթ ձեռագրերում և Նարեկացու երկերի որոշ տպագրություններում:

Սեղ համար հետաքրքրական էր իմանալ, թե ո՞րն է եղել Նարեկացու երկերի այն ձեռագիր կամ տպագիր օրինակը, որը միմբ է ծառայել սույն համարարրատին: Երկար որոնումներից հետո պարզվեց, որ համարարրատի հեղինակը ձեռքի տակ ունեցել է երկու ձեռագիր, որոնցից մեկը՝ «Նարեկ» գիրքը, իսկ մյուս՝ Նարեկացու ճառերը: Երկրորդի՝ հետքերը չենք գտնել, բայց նրա գոյություն ունեցած լինելը հաստատվում է առաջինով՝ «Նարեկ» հատորով, որ Վերջերս մենք գտանք Երևանում: Այս ձեռագիր «Նարեկ»-ը, որն ընդորինակված է 1851 թվականին ուն Գրիգոր Սուրբիանցի՝ ձեռքով, այժմ գտնվում է Հայկ. ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարանում (Հանրային գրադարան)՝¹⁰⁴: Նրա գլուխմանը բուն իսկ գրչի ձեռքով նշանակված են լուսանցքների վրա հայկական տառային թվանշաններով. իսկ հետագայում գլուխմանը մի անժանոր ձեռքով բաժանված են սանր հատվածների կամ տմերի, ճիշտ այն ձևով, ինչպես են Աստվածաշնչի տնատումները, և դրանք արարական թվանշաններով նշանակված են նոյն լուսանցքների վրա՝ բնագրից գգալիորեն տարբերվող թանաքով և բարակ գրչածայլով. և հենց այս հանգամանցներն են, որ մեզ առիթ տվին կոտմելու, թե պիտի սա՝ լիներ «Նարեկ»-ի՝ մեր որոնած օրինակը: Եվ, իրոք, վերևուն որպես նմուշ բերված վկայությունները, նշանակված գլուխմանը ու այդ տնահամարներով, մենք տեղմ ու տեղը գտանք այս ձեռագրում: Սրանով անվիճելիորեն պարզվում է, որ Նարեկացու երկերի համարարրատը կազմող հեղինակի, —ամենայն հավանականությամբ՝ Հակոբ Նալլանի, —ձեռքի տակ եղած հատորներից առաջինն է եղել և թե նրա գրչին են պատկանում այդ տնատումներն ու համարակալումները:

Ի՞նչ նպատակով է կազմված եղել Նարեկացու երկերի այս բազմաշխատ համարարրատը, գույս լեզվական ուսումնասիրությունների համար, թե նաև Նարեկացու երկերի մեկնության համար: Հայտնի չեն: Ըստ երևույթին՝ և՛ մեկը, և՛ մյուսն է եղել նպատակը: Նարեկացու լեզվի խրթնությունն ու հայերեն լեզվի լազարար բառարանների չգոյությունն է, որ, հավանաբար, ուսումնասեր հեղինակին հարկադրել են մեկտեղի նրա գրվածքների ամրող բառապաշարը, որպեսզի համեմատությունների միջոցով կարողանա բացահայտել տարբեր նախադասությունների մեջ այդ բառերի ունեցած նշանակությունն ու իմաստային երանգները և ճշգրտուեն պարզել նախադասությունների մեջ ամփոփված բովանդակությունը: Նկատվում է, որ այս գրավիչ միտքը հնտագայում ևս եղել է խրթնաբան Նարեկացու երկերով և հատկապես «Նարեկ»-ով գրավվողների ուշադրության առարկա: Հովհաննես Աստվածատրյանը (պոլսարա տպագրի որդին), որը 1774 թվականին Նարեկացու երկերի բնական առաջին հրատարակությունն է տվել

¹⁰⁴ ՀՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարան (Հանրային գրադարան), ամենունմնակի գրականության բաժին, երկաթյա պահարան, ձև. № 2:

Այս ձեռագիրը ժամանակին պատկանել է Կ. Պոլի Հայոց Ազգային Մատննադարանին, որ կրկ է 52 թվականը: Նրա մանրամասն նկարագրությունը տես՝ Բարգևն աթոռակից կարողիկու, «Ցուցակ...», էջ 298—300:

2 հատորով¹⁰⁵, «Նարեկ»-ին կցել էր մի փոքրիկ բառացանկ, որը կրում էր «Նշանակութիւնը խրէին բառից ինչ մատենիս» խորագիրը: Այս բառացանկը որոշ չափով համարարառային բնույթ ուներ, որովհետև բառերի դիմաց միաժամանակ նշում էր նաև «Նարեկ»-ի համապատասխան էջերը¹⁰⁶: «Նոյնանման մի գործ էր նաև վենետիկյան միարան Հ. Գարրիել Ավետիքյանի կազմվածը՝ «Ծուցակ մեկնելի բառից ինչ Նարեկին», որ նեղմանակը տպագրել է 1801 թվականին իր հրատարակած «Նարեկ աղօթից»-ի վերջում¹⁰⁷:

Նալլանին վերագրվող վերոնիշյալ մեծի գործը՝ Նարեկացու երկերի համարարրառը թվում է, թե այդ ժամանակ նայ մատենագրության համար մնացել է որպես եզակի երևոյթ: Սակայն այդպես չեր: Իրականության մեջ նույն ԺԸ դարում, նոյնիսկ դեռ Նալլանից էլ առաջ, նայ մատենագրության համարարրառ ունենալու գաղափարը հաստինանում էր ու զարգանում բառարանագրության հունով և դա մի ուղի էր, որը հնարավորություն կտար ընդգրկելու շատ ավելի լայն շրջանակներ, քան կարող էին ընդգրկել առանձին հեղինակների հատկացված համարարրառները:

Դեռնին հասկանալի է, որ բառագիտական ու բառարանագրական աշխատանքների մեջ մեծ տեղ են գրավում բնագրերի լեզվի համեմատական հետազոտություններն այս դեպքերում, երբ տվյալ լեզուն ունի գրական անցյալ, ինչպես է հայերենը: Այդ տեսակետից Ստեփանոս Ռոշքայի երկիատոր բառարանը՝ «Գանձ Հայոց լեզուի»-ն, որը երեսնամյա աշխատանքով ավարտվել էր 1781 թվականին և որի ձեռագիրն այժմ պահպում է Վիեննայի Միսիթարյան Սատենադարանում՝ Յ թվահամարի տակ¹⁰⁸, առաջինն էր նայ բառարանագրության պատմության մեջ: Ռոշքան այսուղե յորաբանչյոր բառի դիմաց, նրան տրվող բացատրությունն աներկրայելի դարձնելու համար, վկայություններ է բերում իրեն մատչելի եղած նայ մատենագրական աղբյուրներից, ինչպես են՝ Խորենացի, Մամրեն, Եզնիկ, Եղիշե, Զենոպ, Գլակ, Հովհաննես Մամիկոնյան, Միսիթար Անեցի, Համաս Արևեցի, «Յաղագս Պիտոյից» գիրքը, քերականների երկեր և ուրիշներ: Ըստ երևոյթին՝ առանց վկայության բառ չկա այս բառարանում, ինչպես հեղինակն ինքն է ասում իր համականերից մեկում, թե «և ոչ զմի բառ թարց վկայութեան դնեմ»: Այս առումով և բառագիտական իր լայն ծավալով ու արժանիքներով իր ժամանակի համար մեծարժեք գործ էր այս բառարանը, որի անտիպ մնացած լինելու մասին ափսոսանք են հայտնել մասնագետները: բայց, ի հարկե, համարարրառային տեսանկյունից սադմնային վիճակ էր ներկայացնում, որովհետև

¹⁰⁵ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացույց նոգեկիր նուսորի, բաշխեալ լիմնատն և մինզ բան» նոգեստն մալրանց, նորապես սրբագրեալ՝ համամատութեամբ հնագոյն և լինիդի ձևոագիր օրինակաց», Կ. Պոլիս, 1774:—«Հաստոր Նրկորդ ներողինաց ճահից շրնչուց արժանաւորաց գովեստից՝ ասացելոց ի սրբոյ նօրեն մորթ: Գրիգորէ Նարեկացու», Կ. Պոլիս, 1774:

¹⁰⁶ Այս բառացանկն արտասպնում է 1780 թվականին Կ. Պոլսում Ստեփանոս Պետրոսյանի տպարանից լուս տեսած «Նարեկ»-ի վերջում: իսկ հնարապայում նաև «Նարեկ»-ի մի շաբր այլ բրատարակություններում:

¹⁰⁷ Հ. Գ. Ավետիքյան, «Նարեկ աղօթից, հարազատ և զգուշաւոր լուծմամբ նորոց բայալունակ, ի նախատ բանասէր աղօթաւորաց», Վենետիկ, 1801: Վերաբրատարակվել է 1827 և 1859 թվականներին:

¹⁰⁸ Այս բառարանի Ա հատորը հայերեն-լատիներեն է, Բ-ը՝ լատիներեն-հայերեն: Նկարագրությունը տես՝ Հ. Հ. Տաշյան, «Ծուցակ հայերէն ծեռագրաց Մատենադարանին Միսիթարնեց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 22–24: Տես նաև՝ Հ. Պ. Ալիշան, «Տեսորիսն ի Գանձ լեզուին Հայոց՝ կամ ի Ստեփանեան բառարան», Թագմանէն, 1852, էջ 86–95:

թվով շատ սահմանափակ էին հայպեզու մատենագրությունից նրա ընդգրկած աղբյուրները:

Այսու ամենայնիվ Ռոշքայով էր սկզբում հայ մատենագրությունից բնագրային հատվածներ քաղելու, դրանք ի մի բերելու և բառաքննության ու բառարանագրության համար օգտագործելու գաղափարը, իսկ դա փաստունեն մատենագրական մի ընդհանուր համարարրատ ունենալու և գիտական օգտագործման համար նրա ունեցած հշանակության ու պիտանիության մասին գործնականորեն տրվող առաջին գնահատականն էր: Բայց այդ առումով ավելի խոշոր դեր է կատարում 1717 թվականից Վեճետիկում հաստատված Մխիթարյան միաբանությունը՝ իր անդամների հավաքական աշխատանքով:

Մխիթար Սեբաստացին և աշակերտները 1749 թվականին հրատարակեցին տարիների քրոնագիր աշխատանքով իրենց պատրաստած «Բատգիր հայկազեան լեզուի» երկխառորյակի առաջին հատորը, իսկ նրա երկրորդ հատորը լույս տեսավ 1769 թվականին¹⁰⁹: Այստեղ ընդգրկված աղբյուրների թիվը ավելի մեծ էր, քան Ռոշքայի մոտ, թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական մատենագրությունից: Ամենակարևոր տեղը գրավում էր Աստվածաշունչ մատյանը, ապա գալիս էին՝ Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս, Դավիթ Անհաղթ, Զենոռ Գրակ, Դրասիանակերտոցի, Նարեկացի, Ծնորհալի, Համբունացի, Սոկրատ, Ոսկեքերան, Նազիանզացի, Կյուրեղ Աղեքանդրացի, «Զգօն» գիրը, «Վարք հարանց», «Կանոնագիրը», «Շարակնոց», «Ցայտատուրը», թշկարաններ, ճառեր, մեկնողական երկեր և այլն, և այլն: Խնչպես երևում է առաջին հատորի առաջարանից՝ այս բառարանին հիմք ծառայելու համար հայուսեան և կամ գործի ընթացքում կատարված էր քարտագրական մի հսկայական աշխատանք, որի շնորհիվ բառերի դիմաց բերված վկայությունների թիվը հաճախ հասնում էր մինչև 20-ի կամ 30-ի: Սակայն, դժբախտաբար, հեղինակները, ինչ ինչ պատճառներով, խիստ կրնատել էին նրանց թիվը և բառերի դիմաց թողել միայն մեկ կամ երկու հատ, լավագույն դեպքում՝ չորսից ոչ ավելի, նաև շատ տեղերում հապավման ենթարկելով վկայությունների բնագրերը: Այդ մասին նրանք գրում են.

«Այլ վասն վկայութեանց ենելոց ի մէնց՝ պարտ է գիտել զերկուս: Առաջին՝ զի ոչ այնչափ էին, որչափ եղաք, այլ առանել. քանզի բազում՝ բար էին, զորս հանեալ եաք գրեթէ ի քան կամ յերեսուն տեղեաց՝ զորոց զամենան տեղիսն քննեալ, քաղեցաք բովանդակ գտարեր հշանակութիւնս, և զետեղեալ զնոսա մի ընդ միով. մեկնեցաք զրասոս. իսկ ի վկայութեանց եղաք զերկուս, կամ զերիս, և կամ զշորս, և զայսն ի բաց թողաք՝ առ ի ոչ ձանձրացուցանել զընթերցուս...: Երկրորդ՝ ի բազում տեղիս զրասու վկայութեանց կրնատելով բերաք, և այս՝ էր ի կամաց, և ոչ վրիպանօք. և պատճառ մեր այս էր, զի պարբերութիւնք բազում վկայութեանց էին երկալմածիք, զորս անմարտ էր բովանդակ ի մէջ բերել»:

¹⁰⁹ «Բատգիրը հայկազեան լեզուի, բաժանեալ յերկուս հատորս, յորոց յառաջնումն՝ որ է տպագրեալ այս, պարտնակեալ գոն լոգմախուն բազմութիւնք բարից Աստուածաշունչ Պորց և այլոց երեսելի մատենից լեզուագէտ դպրապետոց...: Արարեալ ի Մխիթարյա վարդապետէ Սեբաստացոյ Արքայ Հայո Կոչեցնոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իրոց», Վեճետիկ, 1749:

«Բատգիրը հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, յորում նախ պարունակին մնացորդը զբարար բարից...: Արարեալ բազմատրուն և աշակուր ճամսօք յաշակերտաց ամենապատիւնառն Մխիթարյա մեծի արքային և բարոնագիտին Սեբաստացոյ», Վեճետիկ, 1769:

Վկայություն-բնագրերի այսպիսի կրծատումն, անշուշտ, հասկանալի էր այն առումով, որ տպագրվող հատորները բառարաններ էին, լոկ բառերի իմաստը պարզելու սահմանված: Այստեղ կարևոր այն է, որ բառարանագրության ուղիղվ զարգանում էր գաղափարը հայ մատենագրության համարքարադի գիտական դերի մասին:

Մխիթարյանների հաջորդ սերունդն ավելի կարևոր քայլ է անոնց այս բնագավառում: ԺԹ դարի վեցերեցին Մխիթարյան երեք գիտնականներ ձեռնամուխ են լինում Մխիթար Սեբաստացու և նրա անմիջական աշակերտների ձեռքով հօրինված բառարանը բարձրացնելու մի նոր մակարդակի, որի արդյունքը լինում է 1836/87 թվականներին հրատարակումը երկնատոր մի նոր բառարան՝ «Նոր բառգիրք հայկակեան լեզուի»¹¹⁰:

Տավալով վիթսարի այս ձեռնարկումը նաև անհայտեաց էր իր ընդգրկումներով: Սույն բառարանում օգտագործման էին բերված մատենագրական բազմախուս այլ աղբյուրներ, որոնք մասամբ անմատչելի և մասամբ անձանոթ էին եղել Վենեսուսիկում Մխիթարի օրերին: Նկատի ունենալով, որ այստեղ հայ մատենագրության ընդհանուր համարարտի գաղափարն ենք հնտապնդում, ավելորդ չենք համարում թվարկել հայկական քանակությունն իզագմող այդ աղբյուրներից գոնք գիտավորությունը, հիշեցնելով, որ ճշկող անուններից շատ շատերը միաժամանակ բազմաթիվ երկերի հեղինակներ են: Հայագիր հեղինակներից՝ Ազգային գեղոս, Փավստոս, Կորյուն, Եզնիկ, Եղիշե, Խորենացի, Փարպեցի, Մամրե, Հովհան Մանդակունի (և Մայրագունցի), Դավիթ Անհաղթ (և Հարքացի), Ծիրակացի, Գրիգորիս Արշարունի, Ստեփանոս Սյունեցի, Հովհաննես Մամիկոնյան, Թեոդորոս Քոթենավոր, Դրահան Քերտող, Կաղանեկատվացի, Օձնեցի, Խոսրովիկ թարգմանիչ, Ղեկոնդ Երեց, Դրահիանակերտոցի, Թովմա Արծրունի, Զաքարիա կաթողիկոս, Համամ Արևելցի, Խոսրով Անձնացի, Մեսրոպ Երեց, Սամուել Կամրջաձորեցի, Աստիկ, Գրիգոր Մագիստրոս, Լաստիվերտիցի, Ամանիա Սանահնեցի, Ծուռիայի, Լամբրունացի, Գրիգոր Տղա, Ուռիայեցի, Գոշ, Հերացի, Գրիգոր Ակնուացի, Գեորգ Ակնուացի, Բենիկ Վանանդեցի, Հովհաննես Գառնեցի, Մադրիա Արենա, Բարսեղ Մաշկուրցի, Հովհաննես Վանական, Արիստակես Հուետոր, Եսայի Նշեցի, Հովհաննես Երգնեկացի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի, Մխիթար Այրիվանեցի, Վահրամ Ռարունի, Օրբելյան, Խաչատոր Կեշառեցի, Հովհաննես Արծիշեցի, Հեթում Պատմիչ, Մովսես Երգնեկացի, Զաքարիա Մործորեցի, Մխիթար Ապարանեցի, Թովմա Մեծոփեցի, Ներսես Մոլացի, Առաքել Դավիթինցի և որիշներ. ինչպես նաև՝ «Շարակնոց», «Ժամագիրք», «Մաշտոց», «Պատարագամատոյց», «Կանոնագիրք», «Յայսմատորք», «Գանձարան», «Ախտարք», «Եօթնագրեանք», ճառնատիրներ, տոմարական, բժշկական, մնկուղական և այլ երկեր: Թարգմանական գրականությունից ընդգրկված ներ՝ Պատոն, Արիստոտել, Գալիանոս, Փիլոն Երրայեցի, Դիոնիսիոս Արիսպագացի, Դիոնիսիոս Թրակացի, Իգնատիոս Անտիռացի, Գրիգոր Արամելագործ, Աթաման Ալեքսանդրացի, Եփում Կեսարացի, Եփում Խորի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Կյուրեղ Երուսալեմացի, Գրիգոր Նազիանզացի, Ուկերան, Եվգագ Պոնտացի, Պրոլի Կ. Պոլսեցի, Սեբերիանոս Գարաղացի,

¹¹⁰ «Նոր բառգիրք հայկական լեզուի, երկասիրութիւն եղից վարդապետաց յաշակերտությն»: Մեծին Մխիթարայ Արքանօր՝ Հ. Գարբիէլի Անտիքիան, Հ. Խաչատրոյ Սիրմէլիան, Հ. Մկրտչի Աւգերենան», թու. Ա-Բ, Վենետիկ, 1836—1837:

Եպիփան Կիպրացի, Սուլրատ Սքովաստիկոս, Կյուրեղ Աղեքսանդրացի, Անտիպատրոս Բոստրացի, Նեղոս, Գենենատիկոս Կ. Պոլսեցի, Խսիքիկոս Երուսա-ղեմացի, Նոմենոս, Կիհմաքս, Հովհանն Դամասկացի, Գերմանոս Կ. Պոլսեցի, Խանա Ասորի, Միքայել Ասորի, «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ», «Չգօն» գիրքը, «Յաղագ պիտոյից» գիրքը, «Վարք Բարանց», «Գիրք առաջիմութեամց և մոլորդեամց», և այլն, և այլն:

Հնարապոր չէ գուշակել, թե այս հյութերի հիման վրա կազմիկած համարարապային քարտարանում ո՞քան էր թիվը բնագրային վկայությունների: Առաջին հատորի ներածությունից տեղեկանում ենք, որ հրատարակության ժամանակ դրանք գգալի չափով կրճատվել են՝ հյութական միջոցների չգոյության պատճառով: Հեղինակների տված հաշվից երևում է, որ եթե կրճատումները եղած չլինեին, տպագրված երկու հատորների փոխարեն կունենայինք նույնապիս ծավալով հինգ կամ վեց հատորներ. հշանակում է՝ բասսարանը լուս է տեսել մոտ երկու երրորդով կրճատված, և նքել նկատի ունենք, որ նրա բառագիտական մասը (բառերը և բացատրությունները) չէ, որ կրճատված է, այլ միայն վկայակոչումների, ապա պարզ կդառնա, որ հրատարակության շարժանացած երեք կամ չորս հատորների՝ կրճատումը եղել է միմիայն ի հաշիվ վկայությունների:

Ի տարրերություն «Բառգիրք հայկազեան լեզուի»-ի (=Ա), որը բացատրաբար էր ներկայացնում իր ապրյունները, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն (=Բ) վկայությունները դնում է լիարժեք կերպարանքով, առանց խառնելու բացատրության հետ: Բերենք մի երկու օրինակ՝ նարեկացու երկերից առնված նմուշներով.

Ա

Բ

ՄԶՆԱՐՀԵՍՏ.—

...Եւ ըստ այս մզմարմեատ կոչի թմրուկն լսելեաց, որ կազմեալ կայ ի նուրբ մաշկէ իբրև զփոքրիկ բուշտ. ըստ այն Նարեկ. դգ. Մզմարմեատ ուժգնարարատ կազմությու թմրկիս գործականութեան, և այլն:

ՄԻԱՏԵԽԱԿԱ.—

...Իսկ մերթ հշանակէ զազն, որ լինի ի միասին տևելով, կամ համբերելով, և ըստ այս ասի միատեսակ ժուժկալութիւն. Նարեկ. ի գով. կուս.

ԾՐՑՈՒՄՆ.—

...Իսկ մերթ ապշութիւն, կամ ընդհարմացումն, կամ անզգալութիւն, և կամ շուարումն. ուամկ. փատ կտրիլը, կամ շաշմիշ ըլլալը. Նարեկ. դա: ...Իսկ երեւմն շացութիւն, կամ կորուտ տեսութեան, և կամ կուրութիւն. և ըստ այս ասի Նարեկ. ի մեկն. երգոց. բժշկեաց զշրտումն աչաց Պողոսի, այսինքն զշլացութիւնն:

ՄԶՆԱՐՀԵՍՏ.—

Զարկուած վերածածկութեան մզմարինստ ուժգնարարատ խըրուստահնչական կազմուածոյ թմբկիս գործականութեան թուլադաշնակեալ. Նար. դգ.

ՄԻԱՏԵԽԱԿԱ.—

Որդոյ քոյ կցորդութեամք՝ միատեսակն ժուժկալութեամք. Նար. կուս.

ԾՐՑՈՒՄՆ.—

(Բարձ) զյամրութիւնն ընդ շրտմանցն. Նար. դա.

Զշրտումն աչաց (Պողոսի) բժշկել ձեռնադրութեամք. Նար. կուդ.

Բերենք մի բանի օրինակներ դարձյալ Բ-ից.

ԱՆՏԱՐՐԱՓԱԿ.—

Յառաջ քան զիմն յափուեանցն անտարրափակ էութեանց. Նար. լր.
Անտարրափակ ընդարձակութիւն հասու գօրութեան. Նար. ժզ.

ԱՊՍՉԵՆ.—

Ապագէն եղեալ՝ մատնեցալց. Նար. է.

Որ առ աշաց տեսիլ՝ ապագէնք և նուատագոյնը. Նար. կը.

ԴԹԵՄ.—

Յաջն գենցի. Նար. ծե.

Զվիմին գթել ոչ գրեցեր. Նար. ծէ.

Ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց. Նար. նը.

Ինչպես տեսնում ենք՝ համարարրառային գաղափարը, ընթանալով հայ բառարանագրության ուղիով և զարգանալով նոր պահանջման պայմաններում, ըստ ինքան հանգել էր հայ մատենագրության մի ընդհանուր համարրառի ստեղծման փաստին: Այդ փաստը իր տեսակարար կշռով գերազացում էր, անշուշտ, նարեկացու կամ որիշ մատենագիրների նրկերին նվիրելի համարարրառների գաղափարը: Այլ խնդիր է, որ, դժբախտաբար, Մխիթարյան գիտնականների այդ հոլակապ գործի միայն մի փոքրիկ մասն է մեզ հասել տպագրությամբ:

Սպասելի չէ, որ Մխիթարյան միաբանությունը մի օր կարողանա լույս ընծայել հայ մատենագրության համարարառի վերոնիշյալ նյութերը, որով հետև, որքան մեզ հայտնի է, նրանց մի զգալի մասն արդեն գոյություն չունի այսօր: Եվ եթե այդպես է, ապա մնացած մասն արդեն որպես համարարառ հրատարակվելու վիճակում չէ, քանի որ այդ նյութերի ստուգումն ու մանավանդ լրացումն իր հերթին կպահանջներ մի քանի տասնյակ տարիների հավաքական նոր աշխատանք՝ խելաթեղ քանակություն կազմող մատենագրական աղբյուրները մի առ մի նորից հետազոտելու, իսկ նման աշխատանքի համար ներկայումս Մխիթարյան միաբանությունը չունի տրամադրելի ուժը ու միջոցներ:

Եվ սակայն հայագիտությունը մեր օրերում, եթե ուզում է շարունակել իր գարգացման ընթացքը համաշխարհային մակարդակով, չի կարող անտեսել բանասիրական աշխարհում կիրառվող գիտական ժամանակակից մեթոդները, որոնց թվում հետազոտության համարարրառային մեթոդը: Հայ բանասիրությունն ամեն քաղաքություն իր առջև ծառացած է գտնում աղբյուրագիտական և բնագրարանական խնդիրներ, որոնց արագ լուծմանը կարելի է հասնել միայն համարարառի օգնությամբ: Այդ մասին կարող է վկայել հայ բանասիրության ամեն մի մշակ: Բերենք մի օրինակ մեր սեփական աշխատանքների բնագավառից:

Վարդան Այգեկցու նորահայտ երկերից մեկում, որը կոչվում է «Արմատ հաւատոյ»¹¹¹, կամ պարզելի շատ հարցեր, որոնց լուծումը պահանջում է բնագրարանական բազմակողմանի հետազոտություններ: «Արմատ հաւատոյ»-ի աղբյուրների բննությամբ գրավելիս՝ մենք հարկադրված եղանք ի շարու

¹¹¹ Տես Հ. Ս. Անապյան, «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լուսի տակ», Վենետիկ, 1969: Արտատպված է Բազմավելա ամսագրից, 1968, № 7—12:

այլոց կանգ առնել մի հատվածի վրա, որը կրում է Արիստոտելի անոնք՝ «ՅԱՐԻՍՏՈՏԵԼԵՆ ՎԿԱՅ ԲԱՆԻՒ»¹¹²: Այդ հատվածը հետևյալն է:

«Արդ պարս է գիտել թէ խաւարն չէ եռթին և ոչ ուսակութիւն, և ոչ այլ ինչ բնաւ [Ա]Եհց, բայց պակասութիւն լուսոյ. զի չիք խաւարի արարողական պատճառ որ [Ա]Խիւմէ էութենէտ առնէ զնա, այլ ուր լոյս ոչ գոյ՝ անդ խաւար է»:

Արիստոտելի ո՞ր երկից կարող էր լինել այս հատվածը: Խնդիրը պարզեցու համար ասիսկած եղանք մի քանի անգամ որոշումներ կատարել Արիստոտելի այն բոլոր գործերում, որոնք հայերեն թարգմանությամբ հայտնի են, սակայն այդ տաժանելի աշխատանքը ոչ մի արդյունք չտվեց: իսկ դրանից հետո հետաքրքրության համար դիմեցինք Արիստոտելի երկերի հոմանին համարարարակին, որը Ծանոթ (Խավար) բաղի տակ գտանք աղբյուրը՝ Արիստոտելի „Պար Խօթաւան“ («Յաղագ գունց») երկը, որը, որքան հայտնի է բոլորին, հայերենի չի թարգմանվել: Վարդան Այգեկցու բերած հատվածը կազմված է հիշյալ երկի առաջին գլուխ երկու տարրեր սկզբից: «Դրանք են»:

Տօ ծունչ այ շրջուց ժիշտ ժոքից չետ ժառնչ Խավարը գույն չէ, այլ լուսի պակասություն»¹¹³:

Տօ ծունչ չէ չունուու; ուն ժառնչ շնչետա (Խավարը լինում է՝ եր չքանու է լուսը)¹¹⁴:

Սրանով հատվածի ծագումը ճշտվեց՝ շնորհիվ հունարեն համարարարակի: Բայց այս դեպքում, ի հարկեն, բարերաստիկ հանգամանքն այն էր, որ հատվածի սկզբնադրյուրը հունարեն էր և նրա հեղինակի հունարեն երկերը համարարար ունեին: Սակայն այսպիսի զուգահարություններ միշտ չէ, որ կարող նն լինել:

Սյուս կողմից՝ այս կողմնակի միջոցն էլ դնու միայն մասնակիորեն է լուս հարցը՝ եթե հաշվի առնենք, որ մեր հատվածը բառացի չի առնված Արիստոտելի բնագրից, այլ խմբագրված ձևով. և այստեղից արդեն նոր հարց է ծագում, որ եթե ապացուց չունենք, թե Վարդան Այգեկցին ուղղակի ինքն է այն խմբագրել հունարեն աղբյուրից, ապա նաև կարիք կիրակ ենթադրեն, որ նա այս հատվածը կարող է նույնությամբ առած լինել Արիստոտելի գործերի մի որևէ հայերեն մեկնությունից, կամ թե՝ իմաստափրական կամ աստվածաբանական մի որևէ երկից,—ինքնուրույն կամ թարգմանական,—որոնցով այնքան հարուստ է հայ մատենագրությունը: Այստեղ Արիստոտելի հունարեն համարարար արդեն անզոր է մեզ օգնելու և նորից է ծառանում մեր առջև հայ մատենագրության ընդհանուր համարարարի անհրաժեշտությունը:

Ի հարկեն՝ կարելի է աղբյուրագիտական ու բնագրաբանական աշխատանքների բնագավառից Աշել ուրիշ շատ դեպքեր, որոնք հավասարապես հետաքրքրում են պատմաբաններին և լեզվաբաններին: Բառային և լեզվական-քերականական համեմատության այն միջոցներով, որ կը նձեռն ինչ մատենագրության մի ընդհանուր համարարարը, կարելի կիրակ գոնե մասմբ լուծել մի շարք երկերի հեղինակության կամ հրանց թարգմանչների ինքնության վիճելի հարցերը: Օդիմակ՝ թե Խորենացու վավերական հեղի-

¹¹² Երևանի Պետ. Մատ. ձև. № 8295, էջ 878ա:

¹¹³ See' Aristotle, „Minor Works... With an English Translation by W. S. Hett“, Cambridge, Harvard University Press, 1955, p. 6.

¹¹⁴ Ibidem, p. 4.

հակություն հանդիսացող «Պատմութիւն Հայոց»-ի հնատ լեզվական ի՞նչ առնչություններ է ներկայացնում «Գիրք թղթոց»-ում գտնվող դավանական այն գրվածքը, որի հարազատությունը, որպես Խորենացու հեղինակություն, տարակարծությունների առարկա է բանափրության մեջ. կամ թե՝ նրա անունը կրող մի շարք այլ գործեր, ինչպես են Հոփիսիմյաններին, Վարդավառին, Տապանակին, Տիրամոր պատկերին և իշխանական պատկանականին, Քերականի մեկնությունը, և կամ՝ «Յաղագ պիտոյից» և «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյց» երկերի թարգմանությունները: Համարարրատը նմանապես զգալի շափով կօգներ, օրինակ, ըստ լեզվական հատկանիշների խմբավորելու այն բազմաթիվ երկերը, որոնք մեզ են հասել ԺԲ/ԺԳ դարերից՝ «Վարդան» կամ «Վարդան Վարդապետ» հեղինակային անունով, իսկ դրանից հետո հնարավոր կլիներ նաև ասել, թե ո՞ր խումբը ո՞ր Վարդանին է պատշաճում (Վարդաններ՝ Հաղործացի, Այգեկցի, Արևելցի, Բարձրերդեցի, Անեցի, Աղվաննեցի, գուցե նաև որդիշներ):

Հայ մատենագրության ընդհանուր համարարրատի ստեղծման գործը մեր օրերում արդեն ընդգրկվել է հայագիտության գծով տարվող աշխատանքների շրջանակի մեջ: Ավելի քան մեկ տասնամյակ առաջ Հայկ. ՍՍՀ Գիտությունների Ակադեմիան ստանձնել է այդ գործի կազմակերպումը՝ ակադ. Ա. Ա. Ղարիբյանի հախաձեռնությամբ ու ղեկավարությամբ:

Այդ աշխատանքների միմքը դրվել է Ակադեմիայի Լեզվի ինստիտուտում 1957 թվականին՝ աշխարհաբար և գրաբարակեզրու գրականության քարտարաններ կազմելու ծրագրով, իսկ հետագայում գործը տեղափոխվել է Ակադեմիայի Կենտրոնական գրադարանը, որ և շրջանակվում է մինչև այսօր: Գործի սկզբնական շրջանի ծրագրի, կազմակերպման և կատարման եղանակների մասին մենք Լեզվի ինստիտուտի նախկին նիրեկտոր պրոֆ. Ղարիբյանից ստացանք հետևյալ տեղեկությունները:

Սկզբնական շրջանում՝ 1957—1962 թվականների ընթացքում վիթխարի աշխատանք էր ծավալվել Լեզվի ինստիտուտում՝ առաջին հերթին հայ ժամանակակից հեղինակների երկերի համարարրատային քարտարաններ կազմելու նպատակով:

Հեղինակային քարտարաններ կազմելու համար հեղինակի երկերից ամեն մեկը մշակվում էր առանձին, նրանում օգտագործված բառերը հավաքվում էին բարտերի վրա և այդ քարտերը դասավորվում էին այբբենական կարգով: Այդ բառարարտերի վրա էջերի հշումով բերվում էին գրի այն բոլոր հատվածները, որոնց մեջ պատահում էր տվյալ բառը: Եվ երբ այս եղանակով պատրաստվում էին հեղինակի բոլոր աշխատությունների քարտարանները, դրանք ի մի էին ձուլվում և ստեղծվում էր գրողի աշխատությունների համարարրատային լիակատար քարտարանը: Այս ձևով Լեզվի ինստիտուտում լիովին ավարտվել էր Ռաֆֆու գործերի համարարրատային քարտարանը, որն ընդգրկում էր շոր 1 միլիոն 756 հազար բառարտ: Այս ուղիղով էր ընթանում հաև մյուս գրողների քարտարանների կազման գործը: Գարտագրվել էին հետևյալ հեղինակների կարևոր համարված երկերը. Ծիրվանգաղին, Մուրացան, Նար-Դոս, Ծուշանիկ Կուրդինյան, Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղյան, Վահան Տերյան, Լեռ (գեղարվեստական երկերը), Ավետիք Խահակյան, Դանիել Վարուժան, Պետրոս Դուրյան, Միւսար Մեծարենց, Գրիգոր Չոհրապ, Տիգրան Կամարակյան, Մկրտիչ Պեշիկաշյան, Հակոբ Պարոնյան, Ռուբեն Անակ, Վահան Թերեյան, Սիմանթ,

Ներո Խանգաղյան, Գեղամ Սարյան, Նայիրի Զարյան, Գարեգին Ալուսից, Ստեփան Չորյան, Անահիտ Մելքոնյան, Հակոբ Հակոբյան, Սարմեն, Բոդրան Վերդյան, Ակնել Բակոնց, Դերենիկ Դեմիրճյան, Եղիշե Զարենց, Հովհաննես Ծիրազ, Խաչիկ Խաչտենց, Արագի, Անահիտ Սահմանյան, Հրաչյա Քոչար, Քրիստափոր Թափալցյան, Վահան Թորոսյանց, Մկրտիչ Կորյուն: Այս հեղինակների երկերի բովանդակած բառերը լիակատար կերպով են ենթարկվել քարտագրման, իսկ մի քանի որիշ գրողներինը՝ միայն ընտրովի բառերով (Հովհաննես Հովհաննիսյան, Վրջանելու Փափազյան, Մկրտիչ Խերանյան):

Եթե կազմվեր բոլոր հեղինակների ընդհանուր քարտարանը և դրա հիման վրա՝ ընդհանուր համարարրառը, դա հնարավորություն կտար հայերեն արդի գրական լեզուն մետագործելու քազմաթիվ կողմերով, ուսումնասիրելու հրա քառային և բնականական կազմի պատմությունը:

Լեզվի հնատիտուտի համապատասխան բաժնից մեր ստացած տեղեկությունների համաձայն՝ հայ գրական նոր լեզվի համարարրառային աշխատանքները հնատիտուտում դադարեցվել են 1962 թվականին, երբ պրոֆ. Ա. Ս. Ղարիբյանը մեռացել է հնատիտուտի ղեկավարությունից: Ավարտված վիճակում է միայն, ինչպես նշեցինք, Րաֆֆու քարտարանը, որի հիման վրա կազմված քառացանը մնում է անտիպ: Խնատիտուտում 1965 թվականից մի քանի աշխատակիցներ կազմում են ընտրովի քարտարան՝ հիշյալ ընդարձակ քարտարանի հիման վրա, նրա վրա ավելացնելով կարևոր համարվող որոշ երկերի և գրական ու գիտական մամուլում լույս տեսնող ուսումնասիրությունների ընտրովի քառերը: Այս բոլորով, ի հարկեն, հայ գրական լեզվի քարտարանը չի գնում դեպի լիակատարություն և ոչ ել մետապատճենում է համարարրառային նախատակ, քայլ այդ ընդարձակ և ընտրովի քարտարանների նյութերը լայն չափերով օգտագործվում են հնատիտուտի գիտա-մետագորտական աշխատանքների համար: Դրանց հիման վրա կատարվում են ուսումնասիրություններ՝ այս կամ այն հեղինակի լեզվի և ընդհանրապես ժամանակակից հայերենի հարցերի վերաբերյալ: Դրանց հիման վրա է կազմվել «Ժամանակակից հայոց լեզվի քացարական քառարան»-ը, որը քաղկացած է 5 հատորից և որի առաջին հատորը լույս է տեսնել արդեն (Երևան, 1969 թ.): Մրագիր կա կազմելու նաև քացարական մի ավելի ընդարձակ քառարան, որում կօգտագործեն բնագորային վկայություններ ևս, գրարարի «Նոր-Հայկագետան» քառարանի օրինակով, և որը նախատեսվում է 16 հատորով: Նույն նյութերի օգտագործմամբ լեզվի հնատիտուտում և գիտական այլ հաստատություններում կազմվել են և կազմվում են մի շարք հեղինակային քառարաններ, որոնցում լուրացանչյուր քառի տակ, քացի քացարություններ, նշվում են նաև հեղինակի երկերի այն բոլոր էջերը, որոնցում օգտագործված է այդ քառը, մեծ մասամբ բնելով նաև վկայություններ: Այսպես՝ Վարագ Առաքելյանը կազմել է Շեքսպիրի «Համլետ» թատերախաղի հայերեն թարգմանության (թարգմ. Հովհ. Մանեհյան) համարարրառ-քառարանը, թամարա Զիլինգարյանը և Վարագ Առաքելյանը միասին կազմել են Ավետիք Խամակյանի արձակ երկերի համարարրառ-քառարանը, Լիդա Պետրոսյանը՝ Հովհաննես Թումանյանի գեղարվեստական երկերի քառարանը: Նմանապես՝ հեղինակային քառարաններ կամ, ավելի ճիշտ, քառացաններ են կազմել, միայն էջերի լիակատար նշումով և առանց բնագրային վկայությունների, Աշոտ Մարտիրյանը՝ Զարենցի երկերի, Վոլոյյա Ալեքսանդրանը՝ Ծիրազի քանաստեղծությունների, Ֆրիդրիխ Խոլդաբյանը՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմական վեպի:

Լեզվի ինստիտուտում 1960 թվականից սկսվել էր նաև գուարարակեզու հեղինակների երկերի բարտագրում (Եզնիկ, Կորյուն, Սեւեռու և այլն), բայց այդ բարտարամներն այժմ գտնվում են Ակադեմիայի Կննուրունական գրադարանում, որովհետև 1962 թվականին բարտարամային գործը ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության որոշմամբ փոխանցվել է Կենտրոնական գրադարանին, որին այդ ժամանակ դիրեկտոր էր Աշանակվել պրոֆ. Ա. Ս. Ղարիբյանը: Գրադարանին առընթեր կազմակերպվել է մի նոր բաժին՝ «Համարարքառային բարտարանի բաժին»-ը, որի աշխատակիցների թիվը ներկայում մի տասնյակից ավելի չէ: Մենք մի քանի անգամ այցելեցինք այդ բաժինը՝ տեսնելու համար, թե ի՞նչ է այստեղ կատարվող աշխատանքների էությունը, ինչպես են դրանք կազմակերպված և ինչպես են իրագործվում:

Գրադարանի այդ բաժնում աշխատանքների առարկան հայ նին գրականության բարտարանի կազմումն է, մի աշխատանք, որը, ինչպես ասվեց, մասամբ սկսվել էր դեռ Լեզվի ինստիտուտի շրջանում, 1960 թվականին, աշխարհարարի քարտարանին զուգընթաց: Ծրագիրն ընդգրկում է գրադարանու ամրող մատենագրությունը՝ նին և միջն հայերն, ներառյալ բարգմանականը, սկսելով մաշտոցյան դարաշրջանից:

Սակայն դա մի վիթխարի ծրագիր է, որի իրականացման համար ապաստանել միմիայն մարդկային ձեռքի աշխատանքին՝ կնշանակեր արդյունքի սպասել բազմաթիվ տասնամյակներ, իսկ հայագիտությունն իր զարգացման ներկա ընթացքում տրամադրելի այդքան ժամանակ չունի այդ արդյունքին նաևնելու համար: Այդ պատճառով՝ քարտային աշխատանքներում բնագրերի բազմացման արագության համար օգտագործվում է գլատիա մեքնա (rotator, rotator):

Ի դեպ ասենք, որ գլատիա օգտագործումը նոր չէ, որ սկսվել է այս գործում: Դեռ 1957 թվականից, աշխարհարար քարտարանի աշխատանքների մեջ, Լեզվի ինստիտուտում սկսել էր գործել այդ մեքնան: Գլատիաը Ն. Ս. Օ. Սմբանյան Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի նվերն էր Ակադեմիայի Լեզվի ինստիտուտին: Հետագայում Ակադեմիայի Կենտրոնական գրադարանը պր. Երվանդ Հյուսիսյանից (Միլան) նվեր է ստացել ուրիշ երկու գլատիաներ, որոնց մասնակցությամբ էլ այժմ շարունակվում են գրադարի բարտարանի աշխատանքները:

Քարտագրական աշխատանքները մի քանի փուլերով են անցնում՝ մինչեւ որ այս կամ այն գիրքը վերածվի համարարբառի: Բացատրենք մի պայմանական օրինակով:

Առաջին փուլ (Բնագրի պատրաստում).—Ենթադրենք, որ գրքի առաջին էջում կա 250 բառ. ուրեմն՝ այդ էջը բազմացվում է 250 օրինակով: Եվ այսպես բազմացվում են գրքի բոլոր էջերն այնքան օրինակով, որքան բառ կա տվյալ էջի վրա: Հասկանալի է, որ գրքի էջերը պահպանվում են բնագրի բազմացված օրինակների վրա: Սրանով բնագրը պատրաստված է: լինում մշակման աշխատանքի համար:

Երկրորդ փուլ (Քարտագրում).—Բնագրում նշան բոլոր բառերը մերժականորեն փոխադրվում են բարտերի վրա: Այսպես՝ բնագրի առաջին օրինակում ընդգծվում է առաջին բառը և այդ բառը գրվում է բնագրի վերևում: Դրանով արդեն պատրաստ է առաջին բարտը: Բնագրի նրկորոր օրինակում ընդգծվում է նրա երկրորդ բառը և գրվում է վերևում: Դրանով պատրաստ է

դառնում երկորդ քարտը: Եվ այդպես շարունակ՝ առաջին էջի բոլոր 250 օրինակները վերածվում են քառարարտերի: Երբ այս ձևով մշակվում և ավարտվում է առաջին երեսը՝ քազմացվում է հաջորդ երեսը, երրորդը, չորրորդը և այլն: Այսպիսով՝ գրքի բոլոր քառերը վերածվում են քարտերի:

Ե Ր Բ Ո Ր Դ Փ Ո Ւ Լ (Քարտերի այրենական դասավորում).—Բառաքարտերը կտրատվում են և նրանցից յուրաքանչյուրի վրա թողնվում է, եչի ճշման հետ միասին, բնագրից միայն այնքան մաս, որքան մորի քերականական ամրողության տևակենուց պատկանում է տվյալ քարին: Դրանցից հետո բոլոր քառարարտերը ենթարկվում են համախառն դասավորման՝ այրենական կարգով: Հասկանալի է, որ եթե, ամենք, տվյալ գրքում այս կամ այն քառը 50 անգամ է օգտագործվել, այդ քառի 50 քարտերը դասավորվում են իրար ետևից՝ գրքի էջերի հերթականությամբ:

Մշակման այս երեք փուլերն անցնելով՝ գրքի քարտարանը պատրաստ է լինում: Այս քարտարանը փաստորեն տվյալ գրքի քառերի լիակատար քառարանն է՝ շարժական քարտերի վրա: Շարժականության այս վիճակը, սակայն, վտանգավոր է նրանով, որ, անհնարին կամ անզգուց վարվերո դեպքում, քարտերը կարող են դուրս ընկնել իրենց տեղերից ու կորչել և կամ ենթարկվել ականա տեղափոխությունների, իսկ դրանով կարող է աղավաղման, եղծվել ու արժեքագրկվել ամրող քարտարանը: Այս վտանգի դեմ քարտարանի կազմն ու բովանդակությունը ապահովում են մշակման վերջին գործողությամբ, որ է՝

Զ Ե Ր Բ Ո Ր Դ Փ Ո Ւ Լ (Քարտարանի մեքենագրում).—Հերթականությամբ մեքենագրվում ու վերջնապես գրանցվում են քարտարանի բոլոր քառերը՝ ըստ քառարարտերի բովանդակության և սրանով տվյալ գրքի քարտարանը դառնում է նրա համարարրառը: Բայց այս փուլում մշակումը կատարվում է կամ կարող է կատարվել երկու տարբեր եղանակներով և ուղղություններով, որոնք ըստ բնույթի անվանվում են քերականական և բնագրային, և ըստ այնմ էլ գրքի համարարրառը լինում է կամ կարող է լինել երկու տեսակի, որոնց մասին կտեսնենք ստորև:

Սա է համարարրառային քարտարանների և համարարրառմերի կազմը մըման հիմնական ընթացքը:

Այս եղանակով կմշակվեն այս կամ այն ենթինակի երկերն առանձին առանձին, և երբ պատրաստ կլինեն այդ երկերի քարտարանները, դրանցով կատարենքի հետինակի երկերի լիակատար քարտարանն ու համարարրառը: Խոկ սա՝ դեռ բոլորը չեն անշուշտ: Հետագայում կարող է կազմվել նաև ամրող թին՝ գրաքար գրականության ընթինանուր քարտարան ու համարարրառ և սա կլինի իրագործումը հայ մատենագրության ընթինանուր համարարրառի այն գաղափարի, որ այնքան փայփայանքով ներկայացրինք մեր հայուրդ՝ էջերուն և շեշտեցինք այն նշանակությունը, որ նմանօրինակ համարարրառ կունենա թե՛ լեզվաբանական և թե՛ պատմա-բանասիրական հետազոտությունների բնագավառում:

Ակադեմիայի համարարրառային քարտարանի բաժնում կատարվող եռուն աշխատանքները փաստորեն գնում են այդ ուղղությամբ, դեպի այդ նպատակը:

(Ծարունակելի)

